

կան արիւնիցն գատապարտուելով՝ արքունական պողոսայն կը մողնէ, և կակի լեռանց ստորոտով ձանապարհորդել միջոցի համառօտութեան համար, այլ աւաղ, զի ձանապարհ համառօտութեանն փոխանակ՝ իւր կեանքըն կը համառօտէ թշուան, վասն զի մին ձինարից խորափափ մէջ ընկղմելով կը մուտքաւ իւր կեանքըն իւր ձիովն հանգիր, և այնպէս ձիոյ վերս սառած կմնայ իրբեք քարեայ արձան:

Դիւ այդ ցաւալի յօդուածն չմիրջացրած ուշադրութիւնդ գարձո՛ Յարդոյ ընթերց' լ նոյն զեղջ բնակիչ մի անձի ցաւալի տեսարանին, վասն զի Նարատաղիցըն իւր Հայրինիքն վերագարձի ժամանակն (Խլարի) ասացուած զեղջ մերձակայ իւրին վերայ՝ որ եօմն վերսա հետի էր իւրեանց զիւղէն՝ ձիւնահասոն բքի դիպերով և անկարող լինելով նորա զիմարդութեանն իւր տառատոկովն ծածկուելով՝ կը հուրի նոյն բքին, իւր հետն ևս և իւր երիվարն տովալուկ զազանացն, իսկ բրնձի և այլ պղնձեղնաց բռնն և մի հարիւր վաթուուն և եօմն մանեթն օդն իւսպաղելէն ետքը՝ ձանապարհորդաց կիմակին իւր զին միայն իւր ողորմելի ընտանեաց թողով ի մսիթարութիւն. բայց Ասուուած արդարութիւնն շարժելով նորա որբոց վերայ՝ բրնձի միջնորդութեամբն իրեղելուն կատնուին, վասն զի թափեալ բրնձի հետքը զիւտաքրիբներն կառաջնորդէ մինչև (Խլարի) զեղջ զերեզմանոցն, որոյ ապացուցութեամբ խստելով զզիւղացին և ատենի մատնութեան երկիւղիւ սարսափեցուցանելով զնոսա՝ իրեղինաց կէսն վերսացան, որ անշուշտ պիտի հարկադրէ զմնացորդն ևս վճարել:

Է Դ Ա Մ Ե Հ Տ :

ՀԱՄԱԲՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԽՐԱՄՈՒ ԵԿ ՊԵՍԱՐԱՐՊՊՈՅ ՔԱՆԴ ՄԻ ՀԱՏԵԿՈՐ ԾԽՎԱԿԱՆ ԴՊՐՈՏԱՑ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

Արարատ պատուական ամամթերթի էջերուն մէջ ուրախազգաց սրտիւ կարդալով նորանոր Դպրոցաց բացման աւետաւոր լուրը, անոնց անխոտոր կառավարութեան համար յօրինուած կա, նոները, տարեկան հարցաքնոնութեան ժամանակ տեսնուած յառաջարկութիւնը, բնականապէս ամենայն ուսումնասէր հայր նոր եռանդ մի կզբայ ի սրտիւ բաղաքի Դպրոցին վերայ աչք դարձնել և քննողական անաշառ տեսութեամբ հաւասարելով իւր Դպրոցին գրութիւնը ուրիշ ազգային նոյնապիսի Դպրոցաց հետ՝ ջանալ փոյթեանդն ուրով նոր ի նորոյ բարեկարգելու զայն

և գովելի նախանձաւորութեամբ ըստ չափու նիւթական կարեաց Դպրոցին՝ պէտք եղած ուսումնական ու տնտեսական փոփոխութիւնները ընելու, վասն զի ո՛ր և իցէ ազգային կամ օտարազգի Դպրոցներ միշտ նոյն գրութեան ու կառավարութեան կերպը յամառաբար պահպանելով չէ՛ որ յառաջադէմ զարգանալու միջոց ունեցած են, հապա հիս զիւտէ նորանոր բարեկարգ փոփոխութեանց ենթարկուելով կարողացած են իւրեանց իրական նշանակութիւնն լաւ հասկանալ ու կառարել:

Ինչպէս որ զասատուութեան կերպը զզալի կերպով կղիւրանայ նոր եղանակաւ յօրինուած զասաւրոց ի լոյս եղնելովը և իմաստուն գործադրութեամբը, նոյնպէս նա և Դպրոցաց նիւթական ու բարոյական կառավարութեան եղանակը ի լաւ անդր կիսամուխ հոգարարձուաց հմուտ գործառնաւթեամբն, ու զլխաւորապէս անշահասէր գործունէութեամիլը. Ասկից ալ հիւտեւի որ ազգային Դպրոց մի այն ժամանակ միայն կարող է ազատուել իւր հինաւուրց կասպանքներէն ու սեմենեթեալ՝ գրութեանէն երբ դպրոցի մը անսայթաք կառավարութեան զլխաւոր շարժառիթը, որ է գրամազլուխը ի լոյս կենէ և քաղաքի մը հասարակութեան ընդհանուրին առջև կպարզուին Դըրոցի կառավարութեան համար նշանակուած զըրամական աղբեւրները մանրամասն հաշուատեսութեամբ:

Դիտելու արժանի բան է որ մեր ազգին ամենայն հայաբնակ քաղաքաց Դպրոցներուն ինչպէս որ հաստատութեանը սկզբնապատճառ կլինին զիւղի մը կամ քաղաքի մը մէջ քանի մի խօսքի տէր իշխաններ, նոյնպէս և անոնց շուտով փակուելուն նոյն անձնելով կարձ միջոցի մէջ պատճառ կուտան իրենց անհետատես ու շահախնդիր կառավարութեան շնորհիւը. վասն զի նորահաստատ Դպրոցին վերայ ի բացման նոյն անձնելով հոգարարձու նշանակուելով՝ ի հարկէ ի շնորհուելու հարստութեան՝ այնպիսի անթափանցելի վարագուրով կը ջապատճեն նորա տնտեսական կառավարութիւնը հասարակութեան առջև, և այնպէս անմատչելի կը նեն Դպրոցին գոները միջակ կարգի ու աղքատ մարդկանց համար, որ շուտով

զիւղացւոց կամ քաղաքացւոց մեծագցին մասոր ձեռք
կվերցնէ Թպրոցին վերսին, կկարճէ իւր զրամա-
կան օժանդակութիւնը, անժամանակ կհանէ իւր
զաւակը Թպրոցէն, և եթէ չետաքրոքութեամբ
այս արածներուն պատճառը հարցանելու լի-
նիս՝ թէ բարեկամ, եթէ դուն ու միւսը, ձեղ
պէս կրորդն ու չորրորդը, այդպէս պաղ աչքով
նոյին Թպրոցին վերայ, չկրնար Թպրոցը յարատե-
ւելու հաստատուն մաալ, կիակարի. խկոյն ցաւա-
լի ծշմարտութիւն մի կրես բերանէն թէ անզբայր,
և և և ազգային ծառին մէկ ծիւլը կիամարտիմ
և և գուցէ քենէ աւելի ալ կցանկամ Թպրոցին
ո յառաջադիմութեանը, բայց Թպրոցը բացուած
ո ըրէն վեր որ մի տեսած ու լսած ես որ այդ հո-
գարարձու ասուած աղամները մէկ տեղ ժողո-
վուին, հասարակութիւնը հրաւիրեն, Թպրո-
ցին զրամազուխը, են ու մուտքը երեան հա-
սնեն, աշակերտաց յառաջադիմութեանը համար
և կամ Թպրոցին պակասութիւնները հոգալու
նպատակաւ խորհուրդ կազմեն . . . Եւ որով-
և հետեւ լսած եմ թէ Թպրոցը ազգային է և ընդ-
և հանուր հասարակութեան դաստիարակութեանը
և համար շնուռած է և ոչ թէ մասնաւոր աղա-
ներուն արծաթասիրութիւնը յագեցնելու դիտ-
մամբ, ուստի միտք չունիմ աւելորդ տեղ փող
և ծախսել առանց իմանալու թէ ո՞ւր կերթայ
և կամ ի՞նչ բանի համար կողմանը պարուի իմ ու
այլոց տուած փողերը: :

Միրելի՛ ընթերցող, անաշառ ոգուով ասա կա-
զանեմ կարել՛ և այս խօսքերուն ծշմարտութիւնը
ուրանալ. մանաւանդ եթէ քիչ մը վերջը իմանաւ-
լու լինիս, որ իրք այդպէս է շատ տեղեր, ինչպէս
նաև կինի զժմազդաբար Խրիմու և Պատարա-
պիոյ զիեթէ ամեն զպրոցներուն մէջ: Եւ ասոր
համար է որ այս զրուածքիս մէջ պիտի չկարո-
ղանամ: քո ընթերցաւեր ոգւյն ուրախառիթ
բան մի լնծայել, հապա ցաւալի ծշմարտութիւն-
ներ ու ցոյցեր Թպրոցաց անբարեկարգութեանը, ա-
նոնց զրամական հաշուաց խառնամինդոր լինելուն
և ուսումնական ասպարիզի վերայ ամօթապարտ
յետամնացութեանը վերայ, յուսալով որ Թպրո-
ցաց կառավարիչ հոգարարձուներէն ումանք իրդ-
ձահարուած ու զզաստացած ասկից վերջը ջանան

հասարակաց իրաւունքն ու օգուտը մասնաւորէն
որոշելու և ըստ այնմ՝ հոգարարձութեան ղեկ-
վարելու:

Եւ նաևն պէտք է իմանաս որ Ա. Էլմիրածնի
Ուսումնական յանձնաժողովը ըստ պաշտելի հր-
բամանի Ա. Ե. Համար Կամուղիկոսին ամենայն
հայոց, ինչպէս որ կընթենենումք Վրարատայ, ա-
ռաջին տարուան Հոկտեմբեր ամայ թերթերուն
մէջ, թէ և գովելի ջանքով հրատարակած է ծր-
իական Հոգևոր Թպրոցաց կանոնները բայց զբժ-
րագարար հարկեցուցիչ պարտք մի զրուած չէ
հոգարարձուաց վերայ, որ ըստ այնմ՝ վարին եթէ
ոչ ամենայն կէտերուն մէջ, գոնէ այն սկզբունք-
ներով լինի անպատճառ Թպրոցաց կառավարու-
թիւնը. զայն իրենց հաստատուն ու անփոփոխ
կանոն համարեն հոգարարձուներու ընտրութեան,
հաշուետումար բռնելուն և այլ մէկ քանի կարե-
ւոր պարագայից մէջ, որոց վերայ վարը պիտի
խօսիմք: Կարելի չէ ենթազբել որ այս առարկու-
թիւնը, այսինքն հարկեցուցիչ պարտք դնելը հո-
գարարձութեանց վերայ ապօրինի կամ անկարե-
լի բան մի համարուի վասն զի նոյն իսկ ծիսա-
կան Թպրոցաց կրած Հոգևոր անունը կապացու-
ցանէ որ աղ Թպրոցները հոգևոր իրաւասութեան
ներքը պէտք է լինին, ուստի անշուշտ հարկաւոր
է որ հոգևոր իշխանութեան գծազրած կանոննե-
րովը յառաջ երթան. և եթէ ասածիս նման
զիւղացի կամ քաղաքացի հասարակութիւնները
եթէ հոգ տանին ծատիւ կատարելու այդ կանոննե-
րուն քանի մի յօդուածները ազգային Թպրոցք
ոչ միայն շուտ շուտ փակուելու երկիւլը կմեր-
ժեն, հապա եկեղեցւոց պայծառութիւնն ալ յեր-
գեցողութեան զուղընթաց կարող է լինել Թպրո-
ցաց յառաջիւնութեանը հետ յապազայն, նոյնը
պէտք է հասկանալ նաև թեմական Թպրոցաց
նկատմամբ, որոց մէջ այն ատեն հոգարարձու-
թեան պաշտօնը ժառանգական կամ մշտնջենա-
կան չլինէր, ինչպէս որ կտեսնեմք Խրիմու և Պետ-
առարակից քանի մի քաղաքաց մէջ, հապա քա-
ղաքի մը բոլոր հասարակութեան անդամները միա-
բան հաւանութեամբ զար բռնելով հոգարար-
ձուաց հետ, աւելի կտաքնան Պարոցներու վերայ
սրտերը, և միայն հեռուն կեցած քրթմնջող դաս

չն կազմեր, թէ սոսկ հանդիսատես չեն լինիր հոգաբարձուաց ինքնակամ՝ ու քմահաճութեան գործառնութեանցը, այլ միրով կուրիբն իրենց լուման ի գանձանակ դաստիարակութեան զաւակաց, և յաւարա ուսումնական տարւոյն արդարացի իրաւունք կունենան հոգաբարձուներէն հաշը պահանջել Դպրոցի գումարներու վրայօք և վարժապետներէն յառաջադիմութիւն դասատըւութեան մէջ,

Ի՞նչ պատճառաւ է որ Թօւսաց մեծատարած Տէրութեան մէջ զաւառական ու գիւղական Դըպրոցները անսայմաք առաջ երթալով՝ իրենց նըպատակին կհասնին, մի՛ թէ միայն անո՞ր համար որ ապահովուած են նիւթականապէս, վարժապետք անխափան իրենց ոռչիկը կընդունեն յարգունուատ. ո՛չ ըստ իմ կարծեաց այդ մեծ պատճառ չկրնար համարուիլ, այլ գլխաւոր պատճառն է միանգամ հաստատուած կանոնադրութեանց ու դասատուութեան ցուցակներուն ճշուի կատարումն է ու զանցառութեան երկիւղը՝ Դիցո՞ք թէ արդարե զրամական ապահովութիւնն է զաւառական Դպրոցաց յարատեռութեան գլխաւոր պատճառը. բայց մէք չունիմք տակաւին Խրիմու և Պետականապիսի մէջ այնպիսի Դպրոց մի, յորում աւանդուած ուսման ու առարկայից գոնեա կէսը աւանդուի աշակերտաց. ուստի և անոնց այս զրութեանը մէջ կարօտութիւնն մի չերեւը մեծագումար զրամագլխոց. եղածներն ալ կարող էին բաւականացնել Դպրոցաց աշակերտները հասցնելով զիրենիք կէտայիրեալ նպատակին, բայց արի տես որ այդ եղած գումարները ո՛չ թէ շահցուցիչ ու ապահով՝ հապա ըռայիչ ու կորստական ձեռքերու մէջ են. այնպիսի անձանց ձեռքը, որոնք քանի երեսուն տարի շարունակ հոգաբարձուներն են, հաշիւ պահանջող չեն տեսած, քննութեան ու պատասխանատուութեան չեն ենթարկուած, հասարակ ժողովրդեան ձայնը առ ոչինչ համարած են. փառասիրութեամբ ու սնապարձութեամբ լցուած՝ կողմնասէր աչառութեամբ վասնած են ժողովրդեան նուիրատուութիւնքը փախստական անձանց ու եկաւոր տղէտ դաստիարակաց ընդհատ վարժապետու-

թեանը զայն յանխորհուրդս շռայիլով որպէս զի սփառաւորեսցին ի մարդկանէ,

Օրինակի համար մէջ բերենք Աքիրմանի Դըպրոցը նորա զրամագլուխը կառավարութեան կերպը, և հետ զհետէ ուրիշ քանի մի քաղաքներունը, որպէս զի լաւ պարզուին մեր վերցիշեալ խօսքերը, ծշմարտուին Դպրոցին վերայ մեր ըրած առարկութիւնները, և չհամարուին կիրք նախանձու և խոռվասիրութեան հետևեալ ստոյդ ու իրազմաց վկայեալ խորհրդածութիւնքը.

(Եպոնականին)

ՅԱՐԵԴԱՐՀԻ ԳԻԾԵՐ.

Սրգի լուսաւորեալ թագւորաց փայլուն անուանցն մասնակից լինել կճպնի նա և Պարսից Շահն զանցառութեան խաւարն հալածելով իւր բարեկարգութեամբը, ի նշան որոց զՄիրզայ Հուսէ, յինխուանն երկրորդ իւր անուանելով՝ Պարսկաստանի բարեկարգութիւնն և լուսաւորութիւն նորա հանձարեղ խոչականութեանը և լուսաւոր գաղափարաց կյանձնէ, որ Պարսկաստանի լուսաւորեալ և բանագէտ անձինքը ի թիւս որոց և Հայազգի Միրզայ Մելքոնին կամ հայութը համախմբելով ազգային լուսաւորութեան և յառաջադիմութեան լապտերներն ազնիւ կանոնագրութեանց իւղովն վասել սկսաւ Պարսկաստանի մուառոր և բարոյական խաւարն հալածելու առնիւ, որոց մի ըստ միոյն թօւելն այլում բարեկարգատեհ ժամանակի թողլով՝ կիտութամ յուրախութիւն Պարսկահայոց նորա իւր խողճալի բնակչաց արած յուսալիր առաջարկութեանց մին նշանաւորն յայտնել զոր Դաւրէժ հեռագրով ընկալաւ այն է լուսաւորութեամբ և թնդանօմաձգութեամբ կաւտարել կայսեր տարեղարդի օրն ի 6 Սէֆէր ամսոյ յ3 Ապրիլի, և նոյն զիշերի քաղաքիս բոլոր բանական ճնունդը թէ հայ և թէ Պարսիկ ճիշտ տեղեկագրութեամբ յայտնել ինքեան, որոց ըստ կայսերական կարգադրութեանց տարեկան թօշակ պիտի նշանակուի պետութեան գանձարանէն մին-